

**ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ
ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ**

Լանցարոտե, 25-ը հոկտեմբերի 2007թ.

Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները և այլ կողմերը, որոնք ստորագրել են սույն Կոնվենցիան,

նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավել միասնություն ձեռք բերելն է;

նկատի ունենալով, որ յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ընտանիքի, հասարակության և պետության կողմից պաշտպանության այնպիսի միջոցների, ինչպիսիք անհրաժեշտ են նրա անչափահաս լինելու կարգավիճակի համաձայն;

նշելով, որ երեխաների սեռական շահագործումը, հատկապես մանկական պոռնոգրաֆիան և մարմնավաճառությունը, ինչպես նաև երեխաների նկատմամբ ցանկացած սեռական բռնություն, ներառյալ արտասահմանում կատարված գործողությունները, քայքայուն ազդեցություն են թողնում նրանց առողջության և հոգեբանական ու սոցիալական զարգացման վրա;

նշելով, որ երեխաների նկատմամբ սեռական շահագործումը և սեռական բռնությունը սպառնալից չափեր են ընդունել ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում և հատկապես այն փաստը, որ թե՛ երեխաները, թե՛ հանցագործները լայնորեն օգտվում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներից (S2S), ինչպես նաև այն, որ երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության կանխումը և պայքարը դրանց դեմ միջազգային համագործակցություն են պահանջում;

նկատի ունենալով, որ երեխաների բարեկեցությունն ու շահերը հիմնարար արժեքներ են հանդիսանում, ինչը ճանաչվում է բոլոր անդամ պետությունների կողմից և ինչը պետք է պաշտպանվի առանց որևէ խտրականության;

վկայակոչելով Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների Երրորդ գագաթնաժողովում ընդունված Գործողությունների պլանը (Վարչավա, 16-17-ը մայիսի 2005թ.)՝ նպատակաուղղված երեխաների սեռական շահագործման դադարեցմանն ուղղված միջոցառումների մշակմանը;

վկայակոչելով մասնավորապես Նախարարների կոմիտեի Rec(91)11 հանձնարարականը՝ երեխաների և երիտասարդ չափահասների սեռական շահագործման, պոռնոգրաֆիայի, մարմնավաճառության, ինչպես նաև նրանց թրաֆիքինգի մասին, Rec(2001)16 հանձնարարականը՝ սեռական շահագործումից երեխաներին պաշտպանելու մասին, Կիբերտարածության մեջ կատարվող հանցագործությունների մասին կոնվենցիան (ETS N185), առանձնապես դրա 9-րդ հոդվածը, ինչպես նաև Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (CETS N197);

հաշվի առնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիան (1950թ. ETS N5), վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան (1996թ. ETS N163) և Երեխաների իրավունքների իրականացման մասին եվրոպական կոնվենցիան (1996թ. ETS N160);

հաշվի առնելով նաև Միավորված ազգերի կազմակերպության Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, մասնավորապես դրա 34-րդ հոդվածը; Երեխաների վաճառքի, երեխաների մարմնավաճառության և երեխաների պոռնոգրաֆիայի մասին հավելյալ արձանագրությունը; Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգը կանխարգելելու և պատժելու մասին արձանագրությունը; Միավորված ազգերի կազմակերպության Անդրազգային կազմակերպված հանցագործության դեմ կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, ինչպես նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիան Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և վերացման անհապաղ միջոցառումների մասին;

հաշվի առնելով, Եվրոպական միության Խորհրդի Երեխաների սեռական շահագործման և մանկական պոռնոգրաֆիայի դեմ պայքարի շրջանակային որոշումը (2004/68/JHA), Եվրոպական միության Խորհրդի Քրեական դատավարություններում տուժածների կարգավիճակի մասին շրջանակային որոշումը (2001/220/JHA) և Եվրոպական միության Խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին շրջանակային որոշումը (2002/629/JHA);

ի պատշաճի հաշվի առնելով այս ոլորտում այլ համապատասխան միջազգային փաստաթղթերը և ծրագրերը, մասնավորապես Ստոկհոլմյան հայտարարությունը և գործողությունների պլանը՝ ընդունված Երեխաների կոմերցիոն նպատակով սեռական շահագործման դեմ 1-ին Համաշխարհային կոնգրեսում (27-31-ը օգոստոսի 1996թ.), Յոկոհամայն միջազգային պարտավորությունները՝ ընդունված Երեխաների կոմերցիոն նպատակով սեռական շահագործման դեմ 2-րդ Համաշխարհային կոնգրեսում (17-20-ը դեկտեմբերի 2001թ.), Բուդապեշտյան պարտավորությունները և գործողությունների պլանը՝ ընդունված Երեխաների կոմերցիոն նպատակով սեռական շահագործման դեմ 2-րդ Համաշխարհային կոնգրեսի նախապատրաստական կոնֆերանսում (20-21 նոյեմբերի 2001թ.), Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի S-27/2 բանաձևը՝ «Երեխաների համար պատշաճ աշխարհ» և «Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ» եռամյա ծրագիրը, ընդունված Երրորդ գազաթնաժողովի արդյունքում և մեկնարկված Մոնակոյի կոնֆերանսում (4-5-ը ապրիլի 2006թ.);

լի վճռականությամբ արդյունավետորեն նպաստել երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու ընդհանուր նպատակին, ով էլ որ լինի ոճրագործը և օգնություն տրամադրել տուժածներին;

հաշվի առնելով միջազգային համապարփակ փաստաթղթի նախապատրաստման անհրաժեշտությունը նվիրված երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության բոլոր տեսակի դրսևորումների դեմ պայքարի կանխարգելիչ,

պաշտպանիչ և քրեա-իրավական ասպեկտներին և մոնիտորինգի հատուկ մեխանիզմի ստեղծմանը,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

ԳԼՈՒԽ I – Նպատակները, խտրականության արգելման սկզբունքը և սահմանումները

Հոդված 1 – Նպատակները

1. Սույն Կոնվենցիայի նպատակներն են.

- ա) կանխարգելել և պայքարել երեխաների սեռական շահագործման և նրանց հանդեպ սեռական բռնության դեմ,
- բ) պաշտպանել սեռական շահագործումից և սեռական բռնությունից տուժած երեխաների իրավունքները,
- գ) նպաստել ազգային և միջազգային համագործակցության զարգացմանը՝ երեխաների սեռական շահագործման և նրանց հանդեպ սեռական բռնության դեմ մղվող պայքարում:

2. Ապահովելու համար, որպեսզի Կողմերն արդյունավետ կերպով իրականացնեն Կոնվենցիայի դրույթները, այն հիմնում է մոնիտորինգի հատուկ մեխանիզմ:

Հոդված 2 – Խտրականության արգելման սկզբունքը

Կողմերը պետք է ապահովեն, որպեսզի սույն Կոնվենցիայի դրույթները՝ մասնավորապես տուժածների իրավունքների պաշտպանության համար ձեռնարկվող միջոցառումներն իրականացվեն առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից, սեռական կողմնորոշումից, առողջական վիճակից, հաշմանդամությունից կամ այլ դրությունից:

Հոդված 3 – Սահմանումները

Սույն Կոնվենցիայի նպատակների համար,

ա) <<երեխա>> նշանակում է ցանկացած անձ, ում 18 տարին դեռևս չի լրացել,

բ) <<երեխաների սեռական շահագործումը և նրանց հանդեպ սեռական բռնությունը>> ներառում են սույն Կոնվենցիայի 18-23 հոդվածներում բերված գործողությունները,

գ) <<տուժած>> նշանակում է սեռական շահագործման կամ սեռական բռնության ենթարկված երեխա:

Գլուխ II – Կանխարգելիչ միջոցառումները

Հոդված 4 – Մկզբունքները

Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ, կանխարգելելու համար երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության բոլոր տեսակի դրսևորումները և պաշտպանելու համար երեխաներին:

Հոդված 5 – Երեխաների հետ աշխատող անձանց հավաքագրումը, ուսուցումը և իրազեկության մակարդակի բարձրացումը

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ բարձրացնելու համար երեխաների հետ կանոնավոր կերպով շփումներ ունեցող անձանց իրազեկության մակարդակը երեխաների պաշտպանության և նրանց իրավունքների երաշխավորման հարցերում՝ կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության, դատական և իրավապահ ոլորտներում, ինչպես նաև այն ոլորտներում, որոնք կապված են սպորտի, մշակույթի և ազատ ժամանակի կազմակերպման հետ:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որպեսզի 1-ին կետում նշված անձինք ունենան բավարար գիտելիքներ երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության դրսևորման վերաբերյալ, կարողանան բացահայտել նման իրավախախտումները, ինչպես նաև տեղյակ լինեն 12-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված հնարավորության մասին:

3. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ, համաձայն տվյալ երկրի ներքին իրավունքի, որպեսզի երեխաների հետ կանոնավոր շփումներ ունեցող մասնագիտությամբ զբաղվելու համար առաջադրված պայմաններըն ապահովեն, որ թեկնածուները նախկինում դատված չլինեն այնպիսի արարքների համար, որոնք կապված են երեխաների նկատմամբ սեռական շահագործում կամ սեռական բռնություն կատարելու հետ:

Հոդված 6 – Երեխաների ուսուցումը

Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որպեսզի երեխաները տարրական և միջնակարգ կրթություն ստանալու ժամանակ տեղեկանան սեռական շահագործման և սեռական բռնության հետ կապված վտանգի հետ, ինչպես նաև իրենց պաշտպանելու միջոցների մասին՝ համաձայն իրենց կարողությունների: Նման տեղեկատվությունը, որ անհրաժեշտության դեպքում նաև ծնողների հետ համագործակցելով, պետք է տրամադրվի սեռական դաստիարակության առավել ընդհանուր համատեքստում և հարկավոր է առանձին ուշադրություն հատկացնել վտանգավոր իրավիճակների վրա, մասնավորապես՝ կապված տեղեկատվական և հաղորդակցության նոր տեխնոլոգիաների օգտագործման հետ:

Հոդված 7 – Կանխարգելիչ միջամտության ծրագրերը կամ միջոցառումները

Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ այն անձինք, ովքեր մտավախություն ունեն, որ կարող են կատարել սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործությունները, կարողանան օգտվել, հնարավորության դեպքում, արդյունավետ միջամտության ծրագրերից կամ միջոցառումներից, որոնք մշակվել են հանցագործության կատարման վտանգի գնահատման և կանխարգելման համար:

Հոդված 8 – Միջոցառումներ՝ նախատեսված լայն հասարակության համար

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է աջակցի կամ իրականացնի լայն հասարակության համար իրազեկության բարձրացման քարոզարշավներ՝ երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության երևույթի և կիրառելի կանխարգելիչ միջոցառումների մասին տեղեկատվության տարածմամբ:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է իրականացնի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ կանխելու կամ արգելելու համար այնպիսի նյութերի տարածումը, որոնք քարոզում են սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործությունները:

Հոդված 9 – Երեխաների, մասնավոր հատվածի, զանգվածային լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության մասնակցությունը

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է քաջալերի երեխաների մասնակցությունը՝ նրանց կարողություններին համապատասխան, երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության դեմ մղվող պայքարին առնչվող պետական քաղաքականության, ծրագրերի կամ այլ նախաձեռնությունների մշակման և իրականացման գործին:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է խրախուսի մասնավոր հատվածին, մասնավորապես տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների հատվածին, տուրիզմի և ճանապարհորդության ոլորտին, բանկային և ֆինանսական հատվածներին, ինչպես նաև քաղաքացիական հասարակությանը՝ մասնակցել երեխաների նկատմամբ

սեռական շահագործման և սեռական բռնության կանխարգելման քաղաքականության մշակմանը և իրականացմանը և գործի դնել ներքին նորմերը՝ ինքնակարգավորման կամ համատեղ կարգավորման միջոցով:

3. Յուրաքանչյուր Կողմ պետք է խրախուսի զանգվածային լրատվամիջոցներին համապատասխան տեղեկատվություն տարածել՝ երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության բոլոր տեսակի դրսևորումների վերաբերյալ՝ պատշաճ կերպով պահպանելով զանգվածային լրատվամիջոցների անկախությունը և մամուլի ազատությունը:

4. Յուրաքանչյուր Կողմ պետք է խրախուսի ֆինանսավորումը, ինչպես նաև հնարավորության դեպքում՝ քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող նախագծերի, ծրագրերի և հիմնադրամների ստեղծումը, որոնք նպատակաուղղված են երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության կանխմանը և երեխաների պաշտպանությանը:

Գլուխ III – Մասնագիտացված և համակարգող մարմինները

Հոդված 10 – Համակարգման և համագործակցության ազգային միջոցառումները

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցառումներ՝ ապահովելու համար ազգային կամ տեղական մակարդակում տարբեր գործակալությունների գործունեության համակարգումը, որոնք զբաղվում են սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանությամբ, դրանց կանխարգելմամբ և դրանց դեմ պայքարով՝ մասնավորապես կրթության, առողջապահության, սոցիալական ծառայությունների ոլորտներում և իրավապահ ու դատական մարմիններում:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ստեղծելու կամ նշանակելու համար՝

ա) իրավասու անկախ մարմիններ ազգային կամ տեղական մակարդակում երեխայի իրավունքները խրախուսելու և պաշտպանելու համար, ապահովելով դրանց համար հատուկ ռեսուրսների տրամադրումը և պատասխանատվության ընձեռումը,

բ) ազգային կամ տեղական մակարդակում տվյալների հավաքման մեխանիզմներ կամ համակարգող կենտրոններ, որոնք, քաղաքացիական հասարակության հետ համագործակցելով, նպատակաուղղված կլինեն երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության երևույթների մոնիտորինգին և գնահատմանը, պատշաճ ուշադրություն դարձնելով անձնական տվյալների պաշտպանության անհրաժեշտությանը:

3. Յուրաքանչյուր Կողմ պետք է խրախուսի համագործակցությունը իրավասու պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի միջև՝ երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության երևույթների առավել արդյունավետ կանխարգելման և պայքարի համար:

Գլուխ IV – Պաշտպանական միջոցառումներ և օգնություն տուժածներին

Հոդված 11 – Սկզբունքները

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է հաստատի արդյունավետ սոցիալական ծրագրեր և ստեղծի բազմաբնույթ կառույցներ՝ տուժածներին, նրանց մերձավոր ազգականներին, ինչպես նաև տուժածների խնամատար անձանց անհրաժեշտ օգնություն տրամադրելու նպատակով:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է իրականացնի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ ապահովելու համար, որ երբ տուժածի տարիքը հայտնի չէ և հիմքեր կան ենթադրելու, որ նա անչափահաս է, նրան տրամադրվի պաշտպանական և օժանդակման միջոցներ՝ մինչև տարիքի հաստատումը:

Հողված 12 – Սեռական շահագործման կամ սեռական բռնության վերաբերյալ կասկածների մասին տեղեկացները

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ ապահովելու համար, որ երեխաների հետ աշխատող որոշ մասնագետներից ներքին կարգով պահանջվող գաղտնիության ապահովման դրույթը նրանց արգելք չհանդիսանա, երեխաների պաշտպանության նպատակով պատասխանատու ծառայություններին տեղեկացնելու յուրաքանչյուր դեպքի մասին, երբ հիմքեր կան ենթադրելու, որ երեխան դարձել է սեռական շահագործման կամ սեռական բռնության զոհ:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ խրախուսելու համար ցանկացած անձի, ով տեղյակ է կամ հիմնավոր կասկածներ ունի երեխաների նկատմամբ սեռական շահագործման կամ սեռական բռնության մասին, այդ փաստերի մասին, հայտնելու իրավասու մարմիններին:

Հողված 13 – Օգնության տեղեկատվական ծառայությունները

Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ խրախուսելու կամ աջակցելու համար այնպիսի տեղեկատվական ծառայությունների ստեղծմանը, ինչպիսիք են օրինակ՝ հեռախոսային կամ ինտերնետային օգնության գծերը, որոնք տրամադրում են խորհրդատվություն՝ նույնիսկ ապահովելով գաղտնիությունը կամ անանունությունը:

Հողված 14 – Օգնություն տուժածներին

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ օգնելու համար տուժածներին նրանց ֆիզիկական առողջացման և հոգեբանական-սոցիալական վերականգման գործում կարճաժամկետ և

երկարաժամկետ հեռանկարում: Այս կետի համաձայն ձեռնարկված միջոցառումները պետք է հաշվի առնեն երեխայի կարծիքը, կարիքները և մտահոգությունները:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի միջոցառումներ, համաձայն իր ներքին օրենսդրության պահանջների, փոխհամագործակցելով ոչ-կառավարական կազմակերպությունների, այլ համապատասխան կազմակերպությունների կամ քաղաքացիական հասարակության այլ կառույցների հետ, որոնք զբաղվում են տուժածներին օգնելով:

3. Եթե երեխայի ծնողները կամ նրա խնամքը իրականացնող անձինք ներգրավված են նրա նկատմամբ սեռական շահագործման կամ սեռական բռնության մեջ, 11-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման նպատակով իրականացվող ընթացակարգերը պետք է ներառեն՝

- ենթադրյալ իրավախախտի մեկուսացման հնարավորությունը,
- տուժածին իր ընտանեկան միջավայրից մեկուսացման հնարավորությունը:

Նման մեկուսացման պայմանները և տևողությունը պետք է որոշվեն ելնելով երեխայի ամենակարևոր շահերից:

4. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ ապահովելու համար, որ տուժողի մերձավորները հարկ եղած դեպքում օգտվեն բուժական օգնությունից, մասնավորապես ստանան հրատապ հոգեբանական օգնություն:

Գլուխ V – Օպերատիվ միջամտության ծրագրերը կամ միջոցառումները

Հոդված 15 – Ընդհանուր սկզբունքները

1. Յուրաքանչյուր Կողմ, իր ներքին օրենսդրությանը համաձայն, պետք է ապահովի կամ սատարի արդյունավետ միջամտության ծրագրերի կամ միջոցառումների

կիրառմանը 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում հիշատակված անձանց նկատմամբ, նպատակ ունենալով կանխել և նվազագույնի հասցնել երեխաների նկատմամբ սեռական բնույթի հանցագործությունների կրկնման վտանգը: Նման ծրագրերի կամ միջոցառումների կիրառումը պետք է մատչելի լինի դատավարության գործընթացի ցանկացած պահին, ինչպես ազատագրկման վայրերում, այնպես էլ դրանցից դուրս, համաձայն ներքին օրենսդրությամբ սահմանված պայմանների:

2. Յուրաքանչյուր Կողմ, իր ներքին օրենսդրությանը համաձայն, պետք է նպաստի գործընկերային կամ այլ տեսակի համագործակցության զարգացմանը, այնպիսի իրավասու մարմինների միջև, ինչպիսիք են մասնավորապես առողջապահական և սոցիալական, ինչպես նաև դատական ծառայությունները և այն մարմինները, որոնք պատասխանատու են 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում հիշատակված անձանց հետ հետագա աշխատանքի համար:

3. Յուրաքանչյուր Կողմ, իր ներքին օրենսդրությանը համաձայն, պետք է ապահովի սույն Կոնվենցիայով սահմանված վտանգի աստիճանի և հանցագործությունների կրկնման հնարավորության աստիճանի գնահատումը այն անձանց կողմից, որ հիշատակվում են 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում, նախագծելու համար համապատասխան ծրագրեր ու միջոցառումներ:

4. Յուրաքանչյուր Կողմ, իր ներքին օրենսդրությանը համաձայն, պետք է ապահովի իրականացվող ծրագրերի և միջոցառումների արդյունավետության գնահատում:

Հոդված 16 – Օպերատիվ միջամտության ծրագրերից և միջոցառումներից օգնություն ստացող անձինք

1. Յուրաքանչյուր Կողմ, իր ներքին օրենսդրությանը համաձայն, պետք է ապահովի որ սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործության համար քրեական հետապնդման ենթարկվող անձինք հնարավորություն ունենան օգտվել 15-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված ծրագրերից և միջոցառումներից պայմանով, որ

դրանք չեն վնասի կամ չեն հակասի տուժողի պաշտպանության իրավունքին և արդար ու անաչառ դատաքնությանը և, մասնավորապես, կիրականացվեն անմեղության կանխավարկածի սկզբունքի նորմերի պատշաճ պահպանմամբ:

2. Յուրաքանչյուր Կողմ, իր ներքին օրենսդրությանը համաձայն, պետք է ապահովի որ սույն Կոնվենցիայով սահմանված որևէ հանցագործության համար դատապարտված անձինք հնարավորություն ունենան օգտվելու 15-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված ծրագրերից և միջոցառումներից:

3. Յուրաքանչյուր Կողմ, իր ներքին օրենսդրությանը համաձայն, պետք է ապահովի, որ օպերատիվ միջամտության ծրագրերը և միջոցառումները մշակվեն և հարմարեցված լինեն այնպես, որ համապատասխանեն այն երեխաների զարգացման կարիքներին, ովքեր սեռական բնույթի իրավախախտումներ են կատարել, ներառյալ նրանց, ովքեր դեռևս չեն հասել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքին՝ նրանց սեռական վարքի հետ կապված խնդիրները լուծելու նպատակով:

Հոդված 17 – Տեղեկատվություն և համաձայնություն

1. Յուրաքանչյուր Կողմ, իր ներքին օրենսդրությանը համաձայն, պետք է ապահովի, որ 16-րդ հոդվածում հիշատակված անձինք, որոնց առաջարկվում է օգտվել օպերատիվ միջամտության ծրագրերից կամ միջոցառումներից, լիակատար տեղյակ լինեն այդ առաջարկի պատճառներին և տան դրանցից օգտվելու իրենց համաձայնությունը՝ լիովին իրազեկ լինելով փաստերի մասին:

2. Յուրաքանչյուր Կողմ, իր ներքին օրենսդրությանը համաձայն, պետք է ապահովի, որ այն անձինք, ում առաջարկվել է օգտվել օպերատիվ միջամտության ծրագրերից կամ միջոցառումներից, կարողանան հրաժարվել դրանցից, և, որ դատապարտված անձինք նախազգուշացված լինեն հրաժարման հնարավոր հետևանքների մասին:

Գլուխ VI – Նյութական քրեական իրավունքը

Հոդված 18 – Սեռական բնություն

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ քրեական պատասխանատվություն սահմանելու հետևյալ միտումնավոր գործողությունների համար,

ա) սեռական բնույթի գործողություններով զբաղվելը երեխայի հետ, որը, համաձայն ազգային օրենսդրության համապատասխան դրույթների, դեռևս չի հասել օրենքով սահմանված տարիքի նման գործողություններով զբաղվելու համար,

բ) երեխայի հետ սեռական բնույթի գործողություններով զբաղվելը, երբ՝

- կիրառվում են հարկադրանք, ուժ կամ սպառնալիքներ, կամ

- տեղ է գտնում երեխայի նկատմամբ ունեցած վստահության, իշխանության կամ ազդեցության չարաշահում, այդ թվում և ընտանիքի ներսում, կամ

- չարաշահվում է երեխայի առանձնապես անպաշտպան վիճակը, մասնավորապես սահմանափակ մտավոր կամ ֆիզիկական ունակությունների կամ կախվածության մեջ գտնվելու հանգամանքներում:

2. Վերը նշված 1-ին կետի նպատակներից ելնելով յուրաքանչյուր Կողմ պետք է սահմանի այն տարիքը, մինչև որը արգելվում է երեխայի հետ սեռական բնույթի գործողություններ կատարել:

3. 1ա) կետի դրույթները չեն տարածվում անչափահասների միջև փոխադարձ համաձայնությամբ կատարվող սեռական բնույթի գործողությունների վրա:

Հոդված 19 – Հանցագործություններ, կապված մանկական մարմնավաճառության հետ

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ քրեական պատասխանատվություն սահմանելու հետևյալ միտումնավոր գործողությունների համար,

ա) մարմնավաճառությամբ զբաղվելու մեջ երեխային ներգրավելը կամ նրան դրդելը՝ զբաղվելու մարմնավաճառությամբ,

բ) երեխային հարկադրելը զբաղվելու մարմնավաճառությամբ կամ դրանից օգուտ քաղելը կամ այդ նպատակով երեխային այլ կերպ շահագործելը,

գ) մանկական մարմնավաճառության ծառայություններից օգտվելը:

2. Այս հոդվածի նպատակից էլնելով <<մանկական մարմնավաճառություն>> տերմինը նշանակում է երեխային սեռական բնույթի գործողությունների համար օգտագործելը, երբ վճարում են կամ խոստանում ցանկացած այլ վարձատրություն կամ վճար, անկախ այն բանից, թե այդ վարձատրությունը կամ վճարը կամ էլ նման խոստումը տրվում է հենց երեխային, թե մի երրորդ անձի:

Հոդված 20 – Հանցագործություններ, կապված մանկական պոռնոգրաֆիայի հետ

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ քրեական պատասխանատվություն սահմանելու ապօրինի կերպով հետևյալ միտումնավոր գործողությունների համար՝

ա) մանկական պոռնոգրաֆիայի արտադրությունը,

բ) մանկական պոռնոգրաֆիայի առաջարկը կամ տրամադրումը,

զ) մանկական պոռնոգրաֆիայի տարածումը կամ փոխանցումը,

դ) մանկական պոռնոգրաֆիայի ձեռքբերումը իր կամ մեկ այլ անձի համար,

ե) մանկական պոռնոգրաֆիա ունենալը,

զ) տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով միտումնավոր կերպով մանկական պոռնոգրաֆիա մուտք ստանալը:

2. Այս հոդվածի նպատակից էլնելով <<մանկական պոռնոգրաֆիա>> տերմինը նշանակում է այն ամենը, որտեղ երեխան պատկերված է բացահայտ սեռական բնույթի իրական կամ ձևացյալ գործողություններ կատարելիս, կամ երեխայի սեռական օրգանների ցանկացած ցուցադրում՝ գլխավորապես սեռական նպատակներով:

3. Յուրաքանչյուր Կողմ կարող է իրեն իրավունք վերապահել չկիրառել, ամբողջությամբ կամ մասամբ, 1-ին կետի ա) և ե) ենթակետերը՝ պոռնոգրաֆիկ նյութերի արտադրության և պահպանման վերաբերյալ, այն դեպքում

- երբ դրանք իրենցից ներկայացնում են բացառապես մոդելավորված կամ գոյություն չունեցող երեխայի իրական պատկերներ,

- երբ այն ներկայացնում է 18-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տարիքին հասած երեխաներ, եթե նման նկարահանումները կատարվում և պահվում են նրանց մոտ, նրանց համաձայնությամբ և բացառապես նրանց սեփական անձնական օգտագործման համար:

4. Յուրաքանչյուր Կողմ կարող է իրեն իրավունք վերապահել չկիրառել, ամբողջությամբ կամ մասամբ, 1-ին կետի գ) ենթակետը:

Հոդված 21 – Հանցագործություններ, կապված պոռնոգրաֆիկ ներկայացումներում երեխայի մասնակցության հետ

1. Յուրաքանչյուր Կոդմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ քրեական պատասխանատվություն սահմանելու հետևյալ միտումնավոր գործողությունների համար,

ա) պոռնոգրաֆիկ ներկայացումների մեջ երեխային ներգրավելը կամ նրան դրդելը մասնակցել նման ներկայացումներին,

բ) երեխային հարկադրելը մասնակցել պոռնոգրաֆիկ ներկայացումներին կամ դրանից օգուտ քաղելը կամ այդ նպատակներով երեխային այլ կերպ շահագործելը,

գ) երեխաների մասնակցությամբ պոռնոգրաֆիկ ներկայացումներին գիտակցաբար ներկայանալը:

2. Յուրաքանչյուր Կոդմ կարող է իրեն իրավունք վերապահել սահմանափակել 1-ին կետի գ) ենթակետի կիրառումը այն դեպքերի համար, երբ տեղ է գտնում երեխաներին ներգրավելու կամ հարկադրելու իրողությունը՝ համաձայն 1-ին կետի ա) և բ) ենթակետերի:

Հոդված 22 – Երեխաներին անբարոյականացնելը

Յուրաքանչյուր Կոդմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ քրեական պատասխանատվություն սահմանելու համար միտումնավոր կերպով և սեռական նպատակներով՝ 18-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տարիքը դեռ չլրացած երեխային դրդելու ներկա գտնվել սեռական բռնության կամ սեռական բնույթի գործողության դրսևորումներին, անգամ եթե երեխան չի մասնակցում դրանցում:

Հոդված 23 – Մեռական հարաբերությունների առաջարկություն անելը երեխաներին

Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ քրեական պատասխանատվություն սահմանելու համար միտումնավոր կերպով չափահաս անձի կողմից՝ 18-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տարիքը չլրացած երեխային տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով հանդիպման առաջարկության համար, նրա նկատմամբ սույն Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին կետին և 20-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետին համապատասխան սահմանված որևէ հանցագործություն կատարելու նպատակով, երբ նման առաջարկությանը հետևել են գործնական քայլեր հանդիպումը իրականացնելու համար:

Հոդված 24 – Մեղսակցությունը կամ հրահրումը և ոսնձգությունը

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ քրեական պատասխանատվություն սահմանելու համար սույն Կոնվենցիայով սահմանված որևէ հանցագործություն իրականացնելու համար այլոց միտումնավոր կերպով օժանդակելու կամ հրահրելու համար:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ քրեական պատասխանատվություն սահմանելու համար սույն Կոնվենցիայով սահմանված որևէ հանցագործություն իրականացնելու միտումնավոր կերպով արված ոսնձգության համար:

3. Յուրաքանչյուր Կողմ կարող է իրեն իրավունք վերապահել չկիրառել, ամբողջությամբ կամ մասամբ, 2-րդ կետը այն հանցագործությունների նկատմամբ, որոնք այդպիսին են համարվում համաձայն 20-րդ հոդվածի 1-ին կետի (բ), (դ), (ե) և (զ) ենթակետերի, 21-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի, 22-րդ և 23-րդ հոդվածների:

Հոդված 25 – Իրավասությունը

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է իրականացնի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ իրավասություն սահմանելու համար սույն Կոնվենցիայով ճանաչված որևէ հանցագործության նկատմամբ, եթե նման հանցագործություն կատարվել է՝

ա) իր տարածքի վրա, կամ

բ) նավի տախտակամածին, որը լողում է տվյալ երկրի դրոշի տակ, կամ

գ) տվյալ երկրի օրենսդրության համաձայն գրանցված ինքնաթիռում, կամ

դ) տվյալ երկրի քաղաքացու կողմից, կամ

ե) այն անձի կողմից, որ բնակվում է տվյալ երկրի տարածքում:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ջանք դնի ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ իրավասություն սահմանելու նպատակով սույն Կոնվենցիայով ճանաչված որևէ հանցագործության նկատմամբ, եթե այն կատարվել է տվյալ երկրի քաղաքացիներից մեկի կամ այն անձանց հանդեպ, ովքեր բնակվում են տվյալ երկրի տարածքում:

3. Յուրաքանչյուր Կողմ կարող է ստորագրման պահին կամ փաստաթղթի վավերացման, ընդունման, հաստատման կամ դրան անդամակցելու պահին, Եվրոխորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարության մեջ հայտարարել, որ իրեն իրավունք է վերապահում սույն հոդվածի 1-ին կետի ե) ենթակետում սահմանված իրավական դրույթները չկիրառել կամ կիրառել միայն առանձնահատուկ դեպքերում կամ պայմաններում:

4. Սույն Կոնվենցիայի 18-րդ և 19-րդ հոդվածների, 20-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետի և 21-րդ հոդվածի 1-ին կետի (ա) և (բ) ենթակետերի համաձայն որպես հանցագործություններ ճանաչված գործողությունների քրեական հետապնդման նպատակով, յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որպեսզի նրա իրավասությունը 1-ին կետի (դ) ենթակետի նկատմամբ չստորադասվի այն պայմանով, որ նման արարքները քրեական պատժի առարկա լինեն դրանց իրականացման վայրում:

5. Յուրաքանչյուր Կողմ կարող է ստորագրման պահին կամ փաստաթղթի վավերացման, ընդունման, հաստատման կամ դրան անդամակցելու պահին, Եվրոխորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարության մեջ հայտարարել, որ իրեն իրավունք է վերապահում սահմանափակել սույն հոդվածի 4-րդ կետի կիրառումը այն հանցագործությունների նկատմամբ, որոնք այդպիսին են ճանաչվել համաձայն 18-րդ հոդվածի 1-ին կետի (բ) ենթակետի երկրորդ և երրորդ պարբերությունների, այն դեպքերի համար, երբ տվյալ երկրի քաղաքացին բնակվում է իր տարածքում:

6. Սույն Կոնվենցիայի 18-րդ և 19-րդ հոդվածների, 20-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետի և 21-րդ հոդվածի համաձայն որպես հանցագործություններ ճանաչված գործողությունների քրեական հետապնդման նպատակով, յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որպեսզի նրա իրավասությունը 1-ին կետի (դ) և (ե) ենթակետերի նկատմամբ պայմանավորված չլինի նրանով, որ քրեական հետապնդում կարող է սկսվել միայն տուժողի կողմից համապատասխան հայտարարություն կատարելուց հետո կամ այն պետության կողմից ծանուցում ստանալուց հետո, որի տարածքում կատարվել է տվյալ հանցագործությունը:

7. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ իրավասություն սահմանելու համար սույն Կոնվենցիայով

ճանաչված հանցագործությունների նկատմամբ այն դեպքերում, երբ ենթադրյալ հանցագործը գտնվում է տվյալ երկրի տարածքում և, որ նրան չհանձնեն այլ Կողմին միայն նրա քաղաքացության հիման վրա:

8. Այն դեպքում, երբ սույն Կոնվենցիայով հաստատված ենթադրյալ հանցագործության նկատմամբ իրավասություն են հավակնում միանգամից մեկից ավել Կողմ, ապա տվյալ Կողմերը, հնարավորության դեպքում պետք է խորհրդակցեն ընտրելու համար քրեական հետապնդման համար ամենանպատակահարմար իրավասությունը:

9. Կոնվենցիան չի բացառում այս կամ այն Կողմի, իր ներքին օրենսդրության համաձայն, ցանկացած քրեական իրավասության իրականացման հնարավորությունը, եթե դա չի խաթարում միջազգային իրավունքի ընդհանուր նորմերը:

Հոդված 26 – Հավաքական պատասխանատվությունը

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը սույն Կոնվենցիայով սահմանված հանցանքի համար, երբ այն կատարվում է ի շահ իրավաբանական անձի՝ ֆիզիկական անձի կողմից որը գործում է ինքնուրույն կամ իրավաբանական անձի որևէ մարմնի կազմում, որտեղ ղեկավար դիրք է զբաղեցնում համաձայն՝

ա) տվյալ իրավաբանական անձին ներկայացնելու վստահագրի,

բ) տվյալ իրավաբանական անձի անունից որոշումներ կայացնելու լիազորությունների,

գ) տվյալ իրավաբանական անձի շրջանակում վերահսկողություն իրականացնելու լիազորությունների:

2. Բացի 1-ին կետով նախատեսված դեպքերի, յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը այն դեպքերում, երբ 1-ին կետում նշված ֆիզիկական անձի կողմից հսկողության կամ վերահսկողության պակասը հնարավոր են դարձնում սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործության կատարումը ֆիզիկական անձի կողմից տվյալ իրավաբանական անձի շահերից էլնելով և գործելով նրա պատասխանատվության ներքո:

3. Կողմերի իրավական սկզբունքներին ենթակա՝ իրավաբանական անձի պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիական կամ վարչական:

4. Նման պատասխանատվությունը պետք է կրվի առանց խաթարելու հանցագործություն կատարած ֆիզիկական անձանց հանդեպ քրեական պատասխանատվությունը:

Հոդված 27 – Պատժամիջոցները և միջոցառումները

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որպեսզի սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործությունները պատժելի լինեն արդյունավետ, պատշաճ և ազդեցիկ միջոցներով՝ հաշվի առնելով նրանց ծանրության աստիճանը: Այս պատժամիջոցները պետք է ներառեն ազատազրկման պատիժը, ինչը կարող է հիմք ծառայել արտահանձնման համար:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որպեսզի 26-րդ հոդվածի համաձայն պատասխանատվության ենթարկված իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվեն արդյունավետ, պատշաճ և կանխարգելիչ պատժամիջոցներ, ներառյալ

քրեական կամ ոչ-քրեական կարգով նշանակված դրամական տուգանքները, ինչպես նաև, այլ հնարավոր միջոցառումներ, մասնավորապես՝

- ա) պետական նպաստ կամ օգնություն ստանալու իրավունքից զրկելը,
- բ) կոմերցիոն գործունեությամբ զբաղվելու իրավունքից ժամանակավորապես կամ մշտապես զրկելը,
- գ) դատական հսկողության տակ վերցնելը,
- դ) լուծարման մասին դատական որոշումը:

3. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ, որպեսզի՝

- ա) ապահովի առգրավումն ու բռնագրավումը
 - այն գույքի, փաստաթղթերի և այլ միջոցների, որոնք օգտագործվել են սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործությունների կատարման կամ դրանց կատարմանը աջակցելու համար,
 - այն եկամուտների կամ դրանց համարժեք գույքի, որոնք ստացվել են նման հանցագործությունների կատարման արդյունքում,
- բ) ապահովի այն հաստատությունների ժամանակավոր կամ մշտական փակումը, որ կատարել են սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործությունները, առանց խախտելու *bona fide* երրորդ կողմերի իրավունքները, կամ ապահովի իրավախախտի ժամանակավոր կամ մշտական ազատումը պրոֆեսիոնալ կամ կամավոր գործունեության կատարումից, որը կապված է երեխաների հետ շփում ունենալու հետ, որի ընթացքում էլ իրավախախտումը կատարվել է:

4. Յուրաքանչյուր Կողմ կարող է իրավախախտների նկատմամբ կիրառել այլ միջոցառումներ, ինչպիսիք են օրինակ՝ ծնողական իրավունքներից զրկելը կամ դատապարտյալների նկատմամբ դիտարկում և հսկողություն սահմանելը:

5. Յուրաքանչյուր Կողմ կարող է որոշել, որ սույն հոդվածի համաձայն բռնագրավված՝ հանցագործ ճանապարհով ստացված եկամուտները կամ ձեռք բերված գույքը հատկացվի հատուկ հիմնադրամի՝ սույն Կոնվենցիայով սահմանված ցանկացած իրավախախտումների կանխարգելման և դրանցից տուժածներին աջակցելու ծրագրերը ֆինանսավորելու համար:

Հոդված 28 – Ծանրացուցիչ հանգամանքները

Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որպեսզի ստորև նշված հանգամանքները, եթե դրանք արդեն իսկ չեն հանդիսանում հանցագործության բաղկացուցիչ տարրեր, համաձայն ներքին օրենսդրության համապատասխան դրույթների, դիտարկվեն որպես ծանրացուցիչ հանգամանքներ՝ սույն Կոնվենցիայով սահմանված իրավախախտումների համար պատիժը որոշելու ժամանակ.

- ա) հանցագործությունը լուրջ վնաս է հասցրել տուժածի ֆիզիկական կամ մտավոր առողջությանը,
- բ) հանցագործությանը նախորդել են կամ այն ուղեկցվել է խոշտանգումներով կամ կոպիտ բռնության դրսևորումներով,
- գ) հանցագործությունը կատարվել է առանձնապես անպաշտպան գոհի նկատմամբ,
- դ) հանցագործությունը կատարվել է ընտանիքի անդամի, երեխայի հետ ապրող անձի կամ իր պաշտոնը չարաշահած անձի կողմից,
- ե) հանցագործությունը կատարվել է մի քանի անձանց կողմից, ովքեր գործել են համատեղ,
- զ) հանցագործությունը կատարվել է կազմակերպված հանցագործ խմբի կողմից,
- է) հանցագործությունը կատարած անձը նախկինում դատված է եղել համանման հանցագործություններ կատարելու համար:

Հոդված 29 – Նախորդ դատապարտումները

Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որպեսզի սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործությունների համար պատիժը սահմանելու ժամանակ հնարավոր լինի հաշվի առնել դրանց նկատմամբ այլ Կողմի ընդունած վերջնական դատավճիռները:

Գլուխ VII – Հետաքննությունը, դատական հետապնդումը և ընթացակարգային օրենսդրությունը

Հոդված 30 – Սկզբունքները

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որպեսզի հետաքննությունը և քրեական դատավարությունը անցկացվի հաշվի առնելով երեխայի շահերը և հարգելով նրա իրավունքները:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է պաշտպանական մոտեցում կիրառի տուժածների նկատմամբ՝ ապահովելով, որ հետաքննությունը և քրեական դատավարությունը չխորացնեն երեխային հասցված վնասը, և որ քրեական դատավարության իրականացրած միջոցառումներից հետո նրան, անհրաժեշտության դեպքում, օգնություն ցուցաբերվի:

3. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ հետաքննությունը և քրեական դատավարությունը համարվեն առաջնային և անցկացվեն առանց չարդարացված հետաձգումների:

4. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ սույն Գլխի համաձայն կիրառվող միջոցառումները չվնասեն պաշտպանության իրավունքներին և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջների համաձայն անկախ ու անաչառ դատաքննությանը:

5. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ համաձայն իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքների որպեսզի՝

- ապահովի հետաքննության և քրեական դատավարության արդյունավետությունը սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործությունների նկատմամբ, թույլատրելով, որտեղ որ դա նպատակահարմար է, իրականացնել գաղտնի օպերատիվ-քննչական գործունեություն,

- հնարավորություն տրվի ստորաբաժանումներին կամ հետաքննությունը վարող ծառայություններին պարզելու այն զոհերի ինքնությունը, որոնք տուժել են սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործություններից, մասնավորապես վերլուծելով երեխաների մասնակցությամբ պոռնոգրաֆիկ նյութերը, ինչպես օրինակ՝ լուսանկարները և տեսանյութերը, որոնք փոխանցվել են կամ մատչելի դարձել տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործմամբ:

Հոդված 31 – Պաշտպանության ընդհանուր միջոցառումները

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ պաշտպանելու համար տուժածների իրավունքներն ու շահերը, ներառյալ որպես վկաների՝ նրանց հատուկ կարիքների բավարարումը հետաքննության և քրեական դատավարության բոլոր փուլերում, մասնավորապես հետևյալ միջոցներով՝

ա) տեղեկացնելով նրանց իրենց իրավունքների և այն ծառայությունների մասին, որոնցից նրանք կարող են օգտվել և, եթե նրանք չեն հրաժարվում ստանալ նման տեղեկատվություն, այն միջոցառումների մասին, որ ձեռնարկվել են նրանց բողոքների կամ մեղադրանքների հիման վրա, ինչպես նաև հետաքննության և դատավարության ընթացքի մասին, դրանցում նրանց դերի և իրենց գործերի արդյունքների մասին,

բ) անհրաժեշտության դեպքում ապահովելով, որպեսզի այն դեպքերում, երբ տուժածներին և նրանց ընտանիքներին կարող է վտանգ սպառնալ, նրանք տեղեկացվեն այն մասին, որ դատական հետապնդման ենթարկված կամ դատապարտված անձը ժամանակավորապես կամ վերջնականապես ազատ է արձակվել,

գ) նրանց իրավունք տալով ներքին օրենսդրության ընթացակարգային կանոններին համաձայն, ցուցմունքներ տալ, տրամադրել ապացույցներ և ընտրել ինչպես ներկայացնել իրենց կարծիքները, կարիքները և մտահոգությունները՝ ուղղակիորեն թե միջնորդի միջոցով,

դ) տրամադրելով նրանց համապատասխան օժանդակ ծառայություններ, որպեսզի նրանց իրավունքներն ու շահերը պատշաճ կերպով ներկայացված և հաշվի առնված լինեն,

ե) պաշտպանելով նրանց անձնական կյանքի, ինքնության և տեսքի գաղտնիությունը և ձեռնարկելով միջոցներ ներքին օրենսդրությանը համապատասխան թույլ չտալու համար ցանկացած տեղեկատվության հրապարակայնացումը, որը կարող է հանգեցնել նրանց ինքնության բացահայտմանը,

զ) ապահովելով նրանց, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների և նրանց կողմից հանդես եկած վկաների անվտանգությունը ահաբեկումից, վրեժխնդրությունից և կրկնակի անգամ տուժելուց,

է) կանխելով շփումը տուժածների և հանցագործություն կատարած անձանց միջև դատարանի դահլիճում և իրավապահ մարմինների շենքերի տարածքում, եթե միայն իրավասու մարմինները այլ որոշում չեն կայացրել՝ ելնելով երեխայի շահերից կամ եթե նման շփումն անհրաժեշտ է հետաքննության կամ դատավարության համար:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որպեսզի իրավասու մարմինների հետ առաջին իսկ շփումից սկսած տուժածներին հասու լինի համապատասխան դատական և վարչական գործընթացների մասին տեղեկատվությունը:

3. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որպեսզի տուժածները քրեական հետաքննության կողմի կարգավիճակ ստանալու դեպքում ստանան իրավաբանական օժանդակություն, որը համապատասխան պայմանների դեպքում պետք է լինի անվճար:

4. Յուրաքանչյուր Կողմ պետք է դատական իշխանություններին հնարավորություն ընձեռի նշանակել տուժածին հատուկ ներկայացուցիչ այն դեպքում, երբ ներքին օրենսդրության համաձայն նա կարող է ստանալ քրեական հետաքննության կողմերից մեկի կարգավիճակ, իսկ ծնողական պատասխանատվություն կրող անձինք չկարողանան նման հետաքննություններում ներկայացնել երեխային՝ նրանց և երեխայի շահերի միջև հակասության առկայության պատճառով:

5. Յուրաքանչյուր Կողմ պետք է հնարավորություն ընձեռի խմբերին, հիմնադրամներին, միություններին կամ կառավարական և ոչ-կառավարական կազմակերպություններին օրենսդրական կամ այլ միջոցներով, ներքին օրենսդրությամբ նախատեսված պայմանների համաձայն օգնություն ցուցաբերել և/կամ աջակցել տուժածներին նրանց համաձայնության դեպքում՝ սույն Կոնվենցիայի համաձայն հանցագործությունների քրեական հետաքննությունների ընթացքում:

6. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ սույն հոդվածի դրույթների համաձայն տուժածներին տրամադրվող տեղեկատվությունը հաղորդվի նրանց տարիքին և հասունացման մակարդակին համապատասխան կերպով և նրանց համար հասկանալի լեզվով:

Հոդված 32 – Դատավարությունների նախաձեռնումը

Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որ հետաքննությունն ու քրեական դատավարությունն այն հանցագործությունների նկատմամբ, որոնք այդպիսին են ճանաչվել համաձայն սույն Կոնվենցիայի, կախված չլինեն տուժածների կողմից արված հայտարարությունից կամ մեղադրանքից, և որ հետաքննությունը հնարավոր լինի շարունակել, եթե անգամ տուժածը հրաժարվի իր արած հայտարարություններից:

Հոդված 33 – Վաղեմության օրենքը

Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայի 18-րդ հոդվածի, 19-րդ հոդվածի 1-ին կետի (ա) և (բ) ենթակետերի, 21-րդ հոդվածի 1-ին կետի (ա) և (բ) ենթակետերի համաձայն սահմանված հանցագործությունների նկատմամբ հետաքննություններ հարուցելու վաղեմության օրենքը բավարար ժամկետ սահմանի տուժածի կողմից չափահաս դատնալուց հետո արդյունավետ հետաքննություն նախաձեռնելու համար, և որպեսզի այն համաչափ լինի գործած հանցանքի ծանրությանը:

Հոդված 34 – Հետաքննությունները

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ ապահովելու համար, որ այն անձինք, ստորաբաժանումները կամ ծառայությունները, որոնք զբաղվում են հետաքննությամբ լինեն մասնագետներ երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության դրսևորումների դեմ պայքարի բնագավառում կամ որ այդ անձինք ստանան համապատասխան մասնագիտական ուսուցում: Նման ստորաբաժանումները կամ ծառայությունները պետք է ստանան համարժեք ֆինանսական միջոցներ:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որ տուժածի իրական տարիքի մասին անորոշությունը չխանգարի քրեական հետաքննության նախաձեռմանը:

Հոդված 35 – Հարցազրույցներ երեխայի հետ

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որ.

ա) երեխայի հետ հարցազրույցներն անցկացվեն առանց չարդարացված հետաձգումների՝ իրավասու մարմինների կողմից տեղեկատվություն ստանալուց հետո,

բ) երեխայի հետ հարցազրույցներն, անհրաժեշտության դեպքում, անցկացվեն այդ նպատակի համար նախատեսված կամ հարմարեցված տարածքներում,

գ) երեխայի հետ հարցազրույցներն անցկացվեն հատուկ որակավորված մասնագետների կողմից,

դ) երեխայի հետ բոլոր հարցազրույցները, հնարավորության և անհրաժեշտության դեպքում, անցկացվեն միևնույն անձանց կողմից,

ե) հարցազրույցները լինեն հնարավորինս քիչ և անցկացվեն քրեական հետաքննության նպատակներին խիստ անհրաժեշտության դեպքում,

զ) երեխան հնարավորություն ունենա հանդես գալ իր օրինական ներկայացուցչի կողմից կամ, համապատասխան դեպքերում, իր կողմից ընտրված չափահասի կողմից, եթե դատարանը տվյալ անձի դեմ հակառակ որոշում չի կայացրել:

Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որ տուժողի կամ, համապատասխան դեպքերում, վկա հանդիսացող երեխայի հետ տարված բոլոր հարցազրույցները ձայնագրվեն տեսաժապավենի վրա և, որ այդ ձայնագրված հարցազրույցները դատավարության ընթացքում ընդունվեն որպես փաստարկ՝ համաձայն ներքին օրենսդրությամբ նախատեսված նորմերի:

2. Այն դեպքում, երբ տուժողի տարիքն անորոշ է և հիմքեր կան ենթադրելու, որ տուժողը երեխա է, մինչև նրա տարիքի որոշումը պետք է կիրառվեն 1-ին և 2-րդ կետերում սահմանված միջոցառումները:

Հոդված 36 – Քրեական դատավարությունները

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ որ դատաքննության հետ առնչվող բոլոր անձանց, մասնավորապես դատավորների, դատախազների և փաստաբանների համար դասընթացներ կազմակերպվեն երեխաների իրավունքների պաշտպանության, ինչպես նաև երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության դեմ պայքարի վերաբերյալ՝ պահպանելով իրավաբանական մասնագիտությունների ինքնավարությունը կարգավորող նորմերը:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ ներքին օրենսդրության նորմերի համաձայն ապահովելու համար, որպեսի

ա) դատավորը կարողանա որոշում կայացնել, որ լսումներն անցկացվեն առանց հասարակության ներկայության,

բ) տուժածին կարողանան լսել դատարանի դահլիճում հեռակա կարգով, մասնավորապես համապատասխան հաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման միջոցով:

Գլուխ VIII – Տվյալների գրանցումը և պահպանումը

Հոդված 37 – Մեռական բնույթի հանցագործությունների համար դատապարտված անձանց մասին ազգային մակարդակով տվյալների գրանցումը և պահպանումը

1. Սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործությունների կանխարգելման և դրանք քրեապես հետապնդելու նպատակով յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ հավաքելու և պահպանելու համար սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործություններ կատարելու համար դատապարտված անձանց ինքնության և գենետիկ կոդի (ԴՆԹ) վերաբերյալ տվյալներ՝ համաձայն անձնական տվյալների պաշտպանության համապատասխան դրույթների և ներքին օրենսդրությամբ սահմանված այլ համապատասխան նորմերի և երաշխիքների:

2. Յուրաքանչյուր Կողմ փաստաթղթի ստորագրման, վավերացման, ընդունման, հաստատման կամ դրան միանալու պահին Եվրոխորհրդի Գլխավոր քարտուղարին պետք է հայտնի 1-ին կետի դրույթների կատարման պատասխանատվությունը կրող միակ ազգային մարմնի անվանումը և հասցեն:

3. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որ 1-ին կետում նշված տեղեկությունները հնարավոր լինի փոխանցել այլ Կողմի համապատասխան իրավասու մարմնին՝ համաձայն ներքին օրենսդրությամբ սահմանված պայմանների և համապատասխան միջազգային փաստաթղթերի:

Գլուխ IX – Միջազգային համագործակցությունը

Հոդված 38 – Միջազգային համագործակցության ընդհանուր սկզբունքները և միջոցառումները

1. Կողմերը պետք է սերտորեն համագործակցեն միմյանց հետ սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն և միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերի և պայմանավորվածությունների համաձայն, ինչպես նաև համընդհանուր կամ փոխադարձության սկզբունքով գործող օրենսդրությամբ և ներքին օրենքներով սահմանված միջոցառումների կիրառմամբ, նպատակ ունենալով՝

ա) կանխարգելել և պայքարել երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության դեմ,

բ) պաշտպանել տուժածներին և ցուցաբերել օգնություն,

գ) իրականացնել հետաքննություններ և դատավարություններ սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործությունների կապակցությամբ:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործություններից տուժածները կարողանան բողոք ներկայացնել իրենց բնակության երկրի իրավասու մարմիններին այն դեպքում, երբ հանցագործությունը կատարվել է այլ երկրի տարածքում:

3. Եթե քրեական գործերի կամ արտահանձնման հետ կապված փոխադարձ իրավական օգնություն՝ համապատասխան համաձայնագրի առկայության դեպքում միայն տրամադրող որևէ Կողմ իրավական օգնության կամ արտահանձնման հետ կապված խնդրանք ստանա մեկ այլ Կողմից, որի հետ նման համաձայնագիր չի կնքել, ապա սույն Կոնվենցիան կարող է դիտարկվել որպես քրեական գործերի և արտահանձնման հետ կապված փոխադարձ իրավական օգնության տրամադրման

օրինական հիմք՝ սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործությունների նկատմամբ:

4. Յուրաքանչյուր Կողմ պետք է հնարավորինս ապահովի, որ երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության կանխարգելման և նման երևույթների դեմ պայքարը ընգրկվի այլ պետություններին տրամադրվող զարգացմանը օժանդակող ծրագրերում, որտեղ դա նպատակահարմար է:

Գլուխ X – Մոնիտորինգի մեխանիզմը

Հոդված 39 – Կողմերի Կոմիտեն

1. Կողմերի Կոմիտեն պետք է կազմվի Կոնվենցիայի Կողմերի ներկայացուցիչներից:
2. Կողմերի Կոմիտեն պետք է հրավիրվի Եվրոխորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից: Նրա առաջին նիստը պետք է կայանա ոչ ուշ, քան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց մեկ տարի անց, տասերորդ պետության կողմից վավերացվելուց հետո: Հետագա նիստերը պետք է կայանան Կոնվենցիային միացած Կողմերի առնվազն մեկ երրորդի կամ Գլխավոր քարտուղարի պահանջով:
3. Կողմերի Կոմիտեն պետք է ընդունի ընթացակարգի իր կանոնները:

Հոդված 40 – Այլ ներկայացուցիչները

1. Կողմերի Կոմիտեում իրենց ներկայացուցիչներին պետք է նշանակեն Եվրոխորհրդի խորհրդարանական ասամբլեան, Մարդու իրավունքների հանձնակատարը, Հանցագործության խնդիրների եվրոպական կոմիտեն (ՀԽԵԿ), ինչպես նաև Եվրոխորհրդի այլ համապատասխան միջկառավարական կոմիտեները:

2. Նախարարների կոմիտեն կարող է Եվրոխորհրդի այլ կառույցներին առաջարկել ներկայացուցիչ նշանակել Կողմերի Կոմիտեում՝ վերջինիս հետ խորհրդակցելով:

3. Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և, մասնավորապես, ոչ-կառավարական կազմակերպությունները, կարող են ընդգրգվել որպես դիտորդներ՝ համաձայն Եվրոխորհրդի համապատասխան կանոններով նախատեսված ընթացակարգի:

4. Վերը նշված 1-3 կետերի համաձայն նշանակված ներկայացուցիչները Կողմերի Կոմիտեի հավաքույթներին պետք է մասնակցեն առանց քվեարկության իրավունքի:

Հոդված 41 – Կողմերի Կոմիտեի գործառույթները

1. Կողմերի Կոմիտեն պետք է վերահսկի սույն Կոնվենցիայի ներդնմանը: Կողմերի Կոմիտեի ընթացակարգի կանոնները պետք է սահմանեն սույն Կոնվենցիայի ներդնման գնահատման կարգը:

2. Կողմերի Կոմիտեն պետք է աջակցի պետությունների միջև տեղեկատվության, փորձի և առաջադեմ գործընթացների հավաքման, վերլուծության և փոխանակման գործում, նպատակ ունենալով բարելավելու երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության կանխարգելման և այդ երևույթների դեմ պայքարի հնարավորությունները:

3. Կողմերի Կոմիտեն պետք է նաև, երբ դա նպատակահարմար է՝

ա) աջակցի սույն Կոնվենցիայի արդյունավետ կիրառմանն ու ներդնմանը, ներառյալ սույն Կոնվենցիայի հետ կապված խնդիրների և որևէ դրույթի կամ վերապահության հետևանքների հայտնաբերմանը,

բ) արտահայտի իր կարծիքը սույն Կոնվենցիայի կիրառման հետ կապված ցանկացած հարցի վերաբերյալ և աջակցի իրավական, քաղաքական կամ տեխնոլոգիական կարևոր զարգացումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակմանը:

4. Սույն հոդվածով սահմանված գործառույթների իրականացման ժամանակ Կողմերի Կոմիտեին պետք է օժանդակի Եվրոխորհրդի քարտուղարությունը:

5. Հանցագործության խնդիրների եվրոպական կոմիտեն (ՀԽԵԿ) պետք է պարբերաբար տեղեկություններ ստանա սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված գործունեության մասին:

Գլուխ XI – Կապը այլ միջազգային փաստաթղթերի հետ

Հոդված 42 – Կապը՝ Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի և դրան կից Երեխաների առևտրի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին հավելյալ արձանագրության հետ:

Սույն Կոնվենցիան չի ազդում այն իրավունքների ու պարտականությունների վրա, որոնք ծագում են Երեխայի իրավունքների պաշտպանության մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի և դրան կից Երեխաների առևտրի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին հավելյալ արձանագրության դրույթներից, և կոչված է ամրապնդելու տրամադրվող պաշտպանությունը և զարգացնելու և լրացնելու դրանց ստանդարտները:

Հոդված 43 – Կապը այլ միջազգային փաստաթղթերի հետ

1. Սույն Կոնվենցիան չպետք է ազդի այն իրավունքների ու պարտականությունների վրա, որոնք ծագում են այլ միջազգային փաստաթղթերից, որոնց անդամակցում են

կամ կանդամակցեն սույն Կոնվենցիայի Կողմերը, և որոնք պարունակում են դրույթներ սույն Կոնվենցիայով կարգավորվող խնդիրների վերաբերյալ և, ապահովում են ավելի բարձր մակարդակի պաշտպանություն և օգնություն սեռական շահագործման կամ սեռական բռնության գոհ դարձած երեխաներին:

2. Սույն Կոնվենցիայի Կողմերը կարող են միմյանց հետ կնքել երկկողմանի կամ բազմակողմանի համաձայնագրեր սույն Կոնվենցիայում քննարկվող հարցերի վերաբերյալ՝ նպատակ ունենալով լրացնել կամ ամրապնդել դրա դրույթները կամ աջակցել դրանում ամրագրված սկզբունքների կիրառմանը:

3. Եվրոպական միության անդամներ հանդիսացող Կողմերն իրենց փոխադարձ հարաբերություններում պետք է հետևեն Համայնքի և Եվրոպական միության կանոններին այն դեպքերում, երբ գոյություն ունեն կոնկրետ հարցը կարգավորող և կոնկրետ դեպքի համար կիրառելի նորմեր, առանց խաթարելու սույն Կոնվենցիայում ամրագրված նպատակներն և խնդիրները և առանց վնասելու դրանց լիարժեք կիրառումը մյուս երկրների հետ:

Գլուխ XII – Փոփոխությունները Կոնվենցիայում

Հոդված 44 – Փոփոխությունները

1. Որևէ Կողմի ներկայացրած ցանկացած առաջարկություն սույն Կոնվենցիայում փոփոխություն կատարելու վերաբերյալ պետք է փոխանցվի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին և նրա կողմից ուղարկվի Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, բոլոր ստորագրած կողմերին, Կոնվենցիայի Կողմ հանդիսացող բոլոր պետություններին, Եվրոպական համայնքին, 45-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն սույն Կոնվենցիան ստորագրելու հրավեր ստացած պետություններին և 46-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն սույն Կոնվենցիային միանալու հրավեր ստացած պետություններին:

2. Որևէ Կողմի առաջարկած ցանկացած փոփոխություն պետք է փոխանցվի Հանցագործության խնդիրների եվրոպական կոմիտեին (ՀԽԵԿ), որը Նախարարների կոմիտեին պետք է ներկայացնի իր եզրակացությունը առաջարկված փոփոխության վերաբերյալ:

3. Նախարարների կոմիտեն պետք է քննարկի առաջարկված փոփոխությունն ու ՀԽԵԿ-ի ներկայացրած եզրակացությունը և՛ ոչ անդամ պետություն հանդիսացող Կողմերի հետ խորհրդակցելուց հետո, կարող է ընդունել փոփոխությունը:

4. Սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն Նախարարների կոմիտեի կողմից ընդունված փոփոխության տեքստը պետք է ուղարկվի Կողմերին ընդունման համար:

5. Սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն ընդունված ցանկացած փոփոխություն ուժի մեջ կմտնի այն ամսվա առաջին օրը, որը կհաջորդի Գլխավոր քարտուղարին Կողմերի որոշման մասին տեղեկացման ժամկետի սպառումից հետո մեկամսյա ժամանակը:

Գլուխ XIII – Եզրափակիչ դրույթները

Հոդված 45 – Ստորագրումը և ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Եվրոպայի խորհրդի անդամ, և ոչ անդամ այն պետությունների կողմից, որոնք մասնակցել են դրա մշակմանը, ինչպես նաև Եվրոպական համայնքի կողմից:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերագրման, ընդունման կամ հաստատման փաստաթղթերը պետք է ի պահ հանձնվեն Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

3. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի ստորագրման ժամկետի լրացումից հետո եռամսյա ժամանակին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ նախորդ կետի դրույթների համաձայն Կոնվենցիան ներդնելու պարտավորվածությունը ստանձնելու համաձայնություն կհայտնեն հինգ ստորագրող պետություն, որոնցից երեքը Եվրոպական միության անդամ պետություններ պետք է լինեն;

4. 1-ին կետում նշված կամ Եվրոպական համայնքի անդամ հանդիսացող ցանկացած պետության համար, որը հետագայում իր համաձայնությունը կհայտնի ստանձնել Կոնվենցիայում ամրագրված դրույթները, այն ուժի մեջ կմտնի վավերագրման, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ հանձնելուց հետո եռամսյա ժամանակին հաջորդող ամսվա առաջին օրը;

Հոդված 46 – Կոնվենցիային անդամակցելը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն կարող է, սույն Կոնվենցիայի Կողմերի հետ խորհրդակցելուց և նրանց միաձայն համաձայնությունը ստանալուց հետո, ցանկացած պետությանը, որը չի հանդիսանում Եվրոպայի խորհրդի անդամ և չի մասնակցել Կոնվենցիայի մշակմանը, հրավիրել անդամակցելու սույն Կոնվենցիային ձայների մեծամասնությամբ ընդունված որոշման հիման վրա, համաձայն Եվրախորհրդի Կանոնադրության 20-րդ հոդվածի (դ) կետի, և Նախարարների կոմիտեի կազմում ընգրկված Պայմանավորվող Կողմերի ներկայացուցիչների միաձայն որոշմամբ:

2. Ցանկացած միացած պետության համար Կոնվենցիան ուժի մեջ կմտնի միանալու փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու պահից եռամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 47 – Տարածքային կիրառումը

1. Ցանկացած պետություն կամ Եվրոպական համայնքը Կոնվենցիան ստորագրելիս կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ անդամակցման փաստաթուղթն ի պահ հանձնելիս՝ կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ պետք է կիրառվի սույն Կոնվենցիան:

2. Ցանկացած Կողմ կարող է ավելի ուշ՝ ցանկացած պահի, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հղած հայտարարությամբ սույն Կոնվենցիայի կիրառումը տարածել հայտարարության մեջ նշված որևէ այլ տարածքի նկատմամբ, որի միջազգային հարաբերությունների վարման համար ինքը պատասխանատու է կամ ում անունից լիազորված է պարտավորություններ ստանձնել: Այդ տարածքի նկատմամբ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից նման հայտարարությունը ստանալու պահից սկսած երեք ամիսներին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետերի հիման վրա արված ցանկացած հայտարարություն, որ վերաբերում է դրանում նշված որևէ տարածքին, կարող է չեղյալ հայտարարվել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցագրի միջոցով: Չեղյալ հայտարարման որոշումն ուժի մեջ կմտնի Գլխավոր քարտուղարի կողմից համապատասխան ծանուցագրի ստացման պահից սկսած երեք ամիսներին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 48 – Վերապահումները

Սույն Կոնվենցիայի որևէ դրույթի նկատմամբ չեն կարող արվել ոչ մի վերապահումներ, բացառությամբ հստակորեն սահմանված վերապահումների: Ցանկացած վերապահում կարող է չեղյալ համարվել ցանկացած պահի:

Հոդված 49 – Չեղյալ հայտարարումը

1. Ցանկացած Կողմ կարող է ցանկացած պահի չեղյալ հայտարարել իր անդամակցումը սույն Կոնվենցիային Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցագրի միջոցով:

2. Անդամակցման չեղյալ հայտարարման որոշումը ուժի մեջ կմտնի Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցագրի ստացման պահից սկսած երեք ամիսներին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 50 – Ծանուցումը

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, ցանկացած ստորագրած կողմին, Կոնվենցիային Կողմ հանդիսացող ցանկացած պետությանը, Եվրոպական համայնքին, 45-րդ հոդվածի դրույթների համաձայն Կոնվենցիային ադնամակցու հրավեր ստացած ցանկացած պետությանը և 46-րդ հոդվածի դրույթների համաձայն սույն Կոնվենցիային միանալու հրավեր ստացած ցանկացած պետությանը պետք է իրազեկի՝

ա) ցանկացած ստորագրման մասին,

բ) վավերագրման, ընդունման, հաստատման կամ անդամակցման փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին,

գ) 45 և 46 հոդվածների համաձայն սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ցանկացած օրվա մասին,

դ) 44-րդ հոդվածի համաձայն ընդունված ցանկացած փոփոխության և նման փոփոխությունը ուժի մեջ մտնելու օրվա մասին,

ե) 48-րդ հոդվածի համաձայն արված ցանկացած վերապահման մասին,

զ) 49-րդ հոդվածի համաձայն իրականացված ցանկացած անդամակցման չեղյալ հայտարարելու որոշման մասին,

է) սույն Կոնվենցիային վերաբերող ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հայտարարության մասին:

Ի հավաստումն որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կնքված է Լանցարոտում 2007թ. հոկտեմբերի 25-ին՝ անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ օրինակով, որը կպահվի Եվրոպայի խորհրդի արխիվում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները կուղարկի Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր պետության, ինչպես նաև ոչ-անդամ այն պետություններին, որոնք մասնակցել են սույն Կոնվենցիայի մշակմանը, Եվրոպական համայնքին և սույն Կոնվենցիային միանալու հրավեր ստացած ցանկացած պետության: